900

1. Եթե հոգնել ես ճանապարհին,
Դժվար է թվում խաչը կյանքի,
Վերադարձիր կրծքին Հիսուսի,
Նա կասի խոսքեր, իսկ դու հիշիր.

«Իմ կողմից է եղել, սիրելի՛ Իմ զավակ,
Այդ ես եմ պատրաստել
Ճանապարհ քեզ համար:
Դե գնա՛, կյանքն անցիր,
Ցավի մեջ գոհացիր
Եվ սիրիր Հիսուսին,
Ասա՝ Դու կաս»:

2. Եթե հոգսերն են գերի վերցրել,
Մարմնիդ ցավը հոգիդ է գերել,
Կամ հալածանք ես կրում դու անմեղ,
Նա կասի խոսքեր, փորձիր պահել:

3. Թե բարեկամդ քեզ չհասկանա,
Չցուցաբերի Տիրոջ սերը նա,
Ի՞նչ ես նայում մարդուն դու անճար,
Նա կասի խոսքեր հոգուդ համար: